ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մարտի 6-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան	Կոմիտեի անդամ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 7-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Հաշվի առնելով ենթադրյալ կարգապահական խախտման գործով Կոմիտեի անդամ Վահան Բերակչյանի՝ այլ հանգամանքներով ներգրավվածությունը՝ վերջինս, ղեկավարվելով Կանոնակարգի 10.02 կետով, հայտնեց ինքնաբացարկ և չմասնակցեց օրակարգի 1-ին հարցի քննարկմանը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **31.12.2022թ-ի «Վեգա»-«Սպորտինգ» (ՖՁԱԽ-007) խաղին «Վեգա» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեգա» ՖՁ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Վեգա» ՖՁ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000-ի ՀՀ դրամի չափով և գրանցել թիմին տեխնիկական պարտություն 0:5 հաշվով:

2. **23.02.2023թ-ի՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի սեփական դիմումի համաձայն՝ «Լեռնային Արցախ» ֆուտզալի թիմի՝ առաջնության հետագա մասնակցությունից հրաժարումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 3-րդ կետը՝ հեռացնել «Լեռնային Արցախ» ֆուտզալի թիմին առաջնությունից:

3. **01.03.2023թ.-ի «Ուրարտու» -«Վան» (ՊԼ-103) խաղի ժամանակահատվածում «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Լեոն Սաբուայի (44457) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքի վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Լեոն Սաբուայի (44457) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Լեոն Սաբուային (44457) որակազրկել 2 խաղով և «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով: